



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
31 հունվարի 2018 թվականի N 25-Ա

ՎԱՐԴԱՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանին 2018թ. փետրվարի 1-ից 3-ը ներառյալ գործուղել ք. Երևան՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ «Մաքուր Հայաստան» ծրագրի գործողությունները համակարգող հանրապետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Կից՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 հունվարի 25-ի N 03/18.1/412-18 գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱՎՈՐՅԱՆ



2018թ. հունվարի 31
ք. Կապան